երկրից և, ինչպէս երևում է, արդէն շատ բան մոռացել եմ։ Մեր տան սեղանը պահանջող թուրքը մի զօրաւոր բէկ է, որ իւր ձեռքի տակին ունի մի քանի տասնեակ պինդուած ծառաներ։ Ահա մի քանի ամիս է, որ բէկը պահանջում է մեր սեղանը, էհ, ես ինչ անեմ, եթէ չտանք նրան փիշքէշ (ձրի), այն ժամանակ մեր տունն ու տեղը կայրի կրակով, զաւակներիս մէկ-մէկ դնդակահար անել կտայ։ Ուրիշ ճար չկայ, սեղանը պիտի տամ լուռ ու մունջ, որ տանեն և իրենց աչքը կոխեն, իսկ դու շուտով սենեակ մտիր, մի երեայ, որ քեզ չտեսնեն և մի որևէ ձևաս չտան քեզ։ Հաստատ գիտեմ, որ դու կրակոտ բնաւորութիւն և անվախ սիրտ ունիս. դու մեծացել ու ընտելացել ես մեծամեծ քաղաքներում բոլորովին ազատ ու անկախ հոգով... Ա՜խ, տէրտէր չան, գլխիդ մատաղ լինի մայրդ, մեր երկրի բանն ուրիշ է. կարգիդ մեռնեմ, ոչ մի խօսք չխօսես և երբէք ձայն չհանես, հա՜. երբոր թուրքերը մեր բակը մտնեն, դու սենեակից դուրս չգաս։ Ապա թէ ոչ, եթէ թուրքերը իմանան, որ դու իմ հարազատ որդիս ես, այն էլ տէրտէր ես, հաւատացիր ինձ, որ խակոյն կգան և կսպանեն քեզ։ Ձեռոյ ես ինչ անեմ, ինչ դիմանամ այս ծերութեան հասակում։—«Էհ՜ն, մայրիկ, շատ լաւ ես ասում, ախր չէ՞ որ մեր դարբասի դռները բացուելուն պէս թուրքերը տեսան ինձ և հետաքրքրութեամբ սկսեցին դիտել մեր տան ամեն ծակ ու ծուկերը։

— Ճիշտ է, տէրտէր չան, թէև այդ անօրէնները տեսան ամեն բան, բայց ես նրանց ասել եմ նախա-